

Սոցիալ-տնտեսական մոնիտորինգի համակարգի աշխատունակ իրավիճակում պահպանումը և մշակումը ֆինանսապես պետք է ապահովեն տեղական կառավարման մարմինները՝ ի հաշիվ բյուջետային միջոցների: Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով համատարած բյուջետային պակասությունը, հարկ է օգտագործել նաև ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավման հնարավորությունը: Այսպես օրինակ, համայնքային տարածաշրջանի մոնիտորինգի տեղեկատվական բազան ներառում է տարատեսակ տվյալների մեծ բազմություն, որը կարող է օգտակար լինել ինչպես տվյալ տարածաշրջանի բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտների, այնպես էլ այդ տարածաշրջանի սահմաններից դուրս, այդ թվում նաև արտերկրում գործող սուբյեկտների համար:

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը (ՍԱՊՀ)՝ որպես մեր անկախ պետականության սոցիալական քաղաքականության կարևոր հենասյուն, կազմավորվել է 17 տարի առաջ՝ 1991թ. հոկտեմբերի 11-ին, ՀՀ նախարարների խորհրդի թիվ 605 որոշմամբ: ՀՀ ՍԱՊՀ-ն կենսաթոշակների նշանակման և վճարման, ինչպես նաև պետական սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորման աշխատանքներն իրականացնող մարմին է:

Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը կենսաթոշակների նշանակումը, վերահաշվարկումը և վճարումը իրականացնում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք, ընդունված 19.11.2002թ.), «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության որոշումներով և օրենսդրական այլ ակտերով: Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի մուտքերի աղբյուրներն են՝

- ա) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,
- բ) ոչ հարկային եկամուտները՝
 - քաղաքացիներից և իրավաբանական անձանցից նվիրատվության կարգով ստացվող միջոցները,
 - պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների բնագավառում օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը (բացառությամբ վարչական իրավախախտումների),
 - օրենքով և իրավական այլ ակտերով մուտքագրվող այլ եկամուտները,
- գ) պետական և համայնքների բյուջեներից տրամադրվող պաշտոնական տրանսֆերտները,
- դ) պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի ազատ դրամական միջոցների՝ օրենքով սահմանված կարգով ներդրումից ստացված եկամուտները:

Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական կարևորագույն հիմնախնդիրներից է՝ ստեղծել կենսաթոշակային ապահովության այնպիսի համակարգ, որը համարժեք լինի

տնտեսական ոլորտում իրականացվող վերափոխումներին: Նման պայմաններում պետությունը պետք է պայմաններ ստեղծի հասարակության բոլոր անդամների համար, որպեսզի նրանք կարողանան «վաստակել» իրենց կենսաթոշակը, քանզի, ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության հռչակագրի, կենսաթոշակը այն եկամտի փոխհատուցումն է, որը մարդը կորցրել է տարիքի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և այլ դեպքերում աշխատունակության մասնակի կամ լրիվ կորստի կապակցությամբ:

Կենսաթոշակային վերափոխումների նպատակը պետք է լինի՝ հասնել պետական կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության և պայմաններ ստեղծել լրացուցիչ կենսաթոշակային ապահովության զարգացման համար, որը հնարավորություն կտա հասնել ծերության նյութական ապահովության ավելի բարձր չափանիշների:

Ներկա կենսաթոշակային համակարգի բնութագրերն են.

- անհամարժեքությունը կենսաթոշակային համակարգի ֆինանսավորմանը ապահովագրված անձի մասնակցության չափի և վճարվող կենսաթոշակի չափի միջև,
- կենսաթոշակային համակարգի «ոչ ապահովագրական» ծանրաբեռնվածությունը,
- ցածր գնողունակություն ունեցող կենսաթոշակների առկայությունը, որոնք չեն բավարարում կենսաթոշակառուների նվազագույն պահանջմունքները,
- անհամապատասխանությունը տնտեսության մեջ զբաղվածների և կենսաթոշակ ստացողների թվաքանակի միջև:

Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային գործող համակարգը հիմնված է սերունդների համերաշխության սկզբունքի վրա, այսինքն՝ այսօրվա աշխատողներն իրենց աշխատավարձից կատարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների միջոցով ֆինանսավորում են այսօրվա կենսաթոշակառուներին վճարվող կենսաթոշակները: Դա է հիմնական պատճառներից մեկը, որ այսօր ունենք պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ կատարելուց խուսափողների մեծ բանակ (սովերային տնտեսություն), որի պատճառով թերակատարվում է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, և, հետևաբար, ուշացումներով են իրականացվում կենսաթոշակների, գործազրկության նպաստների վճարումները, սոցիալական ապահովագրության այլ ծրագրերի ֆինանսավորումը:

Կենսաթոշակային համակարգի նման իրավիճակում հայտնվելը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, որոնք են.

- անցումը կենտրոնացված պլանավորման համակարգից շուկայական հարաբերություններին՝ առանց սոցիալական ապահովության իրավական նորմերի փոփոխության,
- աշխատանքային շուկայի կառուցվածքային տեղաշարժը և ժողովրդագրական իրավիճակի փոփոխությունը,
- բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում աշխատավարձի դերի նվազումը,
- զբաղվածության մակարդակի կրճատումը, թաքնված զբաղվածության առկայությունը և սովերային տնտեսության մեծ չափերը,
- չհիմնավորված արտոնյալ կենսաթոշակային համակարգի առկայությունը:

Ժողովրդագրական իրավիճակը մեծ ազդեցություն է թողնում կենսաթոշակային համակարգի վրա: Հայաստանը համարվում է աշխարհի արագ ծերացող երկրներից մեկը. 2007թ. կենսաթոշակառուների թվաքանակը կազմել է 522.6 հազար մարդ, այսինքն՝ բնակչության 16.2%-ը¹, իսկ աշխատունակ բնակչության թվաքանակը՝ 1.168.0 հազար մարդ կամ բնակչության 36.2%-ը, իսկ Համաշխարհային բանկի գնահատումներով բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը 2020թ.-ին կհասնի 19.6, 2050թ.-ին՝ 27.9%-ի²:

¹ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» 2007թ. հունվար-դեկտեմբերին:

² Материалы международного семинара: “Пенсионная реформа”, 15-22 сентября 1997г., Тель-Авив, Израиль.

Կենսաթոշակային բաշխման համակարգը դրսևորում է իր լավագույն որակներն այն դեպքում, երբ համակարգի «աշխատողներ/կենսաթոշակառուներ» բեռնվածության գործակիցը՝ տնտեսության մեջ զբաղվածների և կենսաթոշակառուների թվաքանակի հարաբերակցությունը, կազմում է 1:10, այնինչ ըստ պաշտոնական տվյալների այն ՀՀ-ում կազմում է 2,3:1, այլ խոսքով՝ 2,3 զբաղվածին ընկնում է 1 կենսաթոշակառու¹:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի ֆինանսական հնարավորությունների վրա ազդող լուրջ տնտեսական գործոն է տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատումը: Առկա է նաև թաքնված գործազրկությունը. թաքնված գործազուրկի կարգավիճակում են գտնվում այն բոլոր զբաղվածները, որոնք, աշխատավարձի ցածր չափերի պատճառով, չեն կարողանում ապահովել իրենց և իրենց ընտանիքի խնամառու անդամների նվազագույն կենսամակարդակը («Զբաղվածության պետական ծառայության» տվյալներով գրանցված գործազուրկներից 12-15 հազ. մարդ ընդգրկված է ոչ ֆորմալ գործունեության բնագավառում): Դա վերաբերում է հատկապես սովերային տնտեսությանը:

Նման պայմաններում առաջանում են չգրանցված աշխատանքային հարաբերություններ՝ առանց սոցիալական ապահովագրության համակարգում ապահովագրության պարտավորություն ստանձնելու, ինչը հանգեցնում է ապահովագրական վճարների կրճատմանը:

Ընթացիկ կենսաթոշակային համակարգը կայուն կլինի, եթե առկա լինի գնալով աճող պաշտոնական աշխատուժ, որը սոցիալական վճարումներ է կատարում: Այսպիսով, այն մեծապես կախված է պաշտոնական զբաղվածության կայունությունից:

Աղյուսակ 1

Տնտեսապես ակտիվ բնակչության կազմը ըստ սեռի, 2006-2007թթ.²

	Տնտեսապես ակտիվ բնակչություն, հազ. մարդ	Այլ թվում՝		Գործազրկու- թյան մակարդակը
		Զբաղվածների թվաքանակը, հազ. մարդ	Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը, հազ. մարդ	
2006թ.				
Ընդամենը	1181.3	1092.4	88.9	7.5
Կին	562.8	499.4	63.4	11.3
Տղամարդ	618.5	593.0	25.5	4.1
2007թ.				
Ընդամենը	1168.0	1085.3	82.8	7.1
Կին	556.0	496.1	59.9	10.8
Տղամարդ	612.0	589.2	22.9	3.7

Կենսաթոշակային միջոցների ձևավորման վրա մեծ ազդեցություն է թողնում բնակչության դրամական եկամուտների կառուցվածքի փոփոխությունը³:

Բնակչության դրամական եկամուտները 2007թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 2125415.7 մլն դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 2001983.1 մլն դրամ: Դրանց աճի տեմպերը 2006թ. հունվար-դեկտեմբերի համեմատ, համապատասխանաբար, կազմել են 125.7 և 123.6%: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պար-

¹ «Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության ուղղվածության հիմնադրույթները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում:

² ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

³ «Экономика социальной сферы: Учебное пособие.» – Игнатов В.Г., Батурин Л.А., Бутов В.И., Уварова Г.Г., Ходарев С.В., Элланский Ю.Г. Ростов на Дону: Изд-во «Март» 2001.

տաղիր վճարումները, հաշվի առած սպառողական զների ինդեքսների փոփոխությունները) 2007թ. հունվար-դեկտեմբերին 2006թ. հունվար-դեկտեմբերի համեմատությամբ աճել են 19.2%-ով:

Աշխատուժի զինը հանրապետության աշխատանքի շուկայում բավականին ցածր է, որը հանգեցնում է բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում աշխատավարձի դերի նվազմանը: Միաժամանակ եկամուտների մեջ աշխատավարձի տեսակարար կշռի նվազմանը զուգընթաց աճել է սոցիալական եկամուտների բաժնեմասը (մարդասիրական օգնություն, դրամական փոխանցումներ հարազատներից, բարեգործություն և այլն), որոնցից ապահովագրական վճարներ չեն գանձվում:

Կենսաթոշակային համակարգի ֆինանսավորումն իրականացվում է ապահովագրական վճարների հաշվին, որոնք հավաքագրվում են ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամում: Հիմնադրամում հավաքագրվող միջոցների մեծ մասը՝ 90,3%-ը վճարում է գործատուն՝ աշխատավարձի ֆոնդից: Վճարումների մնացած մասը՝ 3%-ը, որը կատարում է աշխատողն իր աշխատավարձից, կազմում է հավաքագրվող բոլոր վճարների 9,7%-ը: Այսինքն՝ այսօր կենսաթոշակային ապահովության համակարգի ֆինանսավորման հիմնական ծանրաբեռնվածությունը կրում են գործատուները¹:

Ներկայումս կենսաթոշակների ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում աշխատավարձի ֆոնդից կատարվող սոցիալական ապահովագրական վճարների հաշվին: Ըստ վիճակագրական տվյալների՝ հանրապետության ՀՆԱ-ում աշխատավարձի մասնաբաժինը կազմում է մոտ 40%: Դրանում ներառված չեն աշխատանքի վարձատրության գործոնային եկամուտները: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ի մեջ աշխատավարձի մասնաբաժինը, ըստ բնակչության կողմից սպրանքների և ծառայությունների սպառման ծավալի, բավականին բարձր է:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների փաստացի հավաքագրումը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 40642.6 մլն դրամ: 2007թ. առաջին կիսամյակի ընթացքում հավաքագրված սոցիալական վճարի ծավալը 5746.3 մլն դրամով գերազանցել է 2006թ. համապատասխան ժամանակաշրջանի մակարդակը:

Կարելի է փաստել, որ հիմնադրամի ֆինանսական վիճակն ամենից առաջ պայմանավորված է աշխատանքի վարձատրության ֆոնդի մեծությամբ, դրա ձևավորման միտումներով, ինչպես նաև հանրապետության համախառն ներքին արդյունքում վերջինիս ունեցած բաժնեմասով: Ուստի և, առանց բնակչության եկամուտներն ու աշխատավարձի համակարգը կարգավորող բարեփոխումների, կենսաթոշակային ապահովության համակարգում կատարված փոփոխությունները դրական արդյունք չեն տա, քանի որ հանրապետության կենսաթոշակային ապահովագրության համակարգի ձևավորումը կապված է աշխատավարձի համակարգում տեղի ունեցող կանխատեսելի փոփոխությունների հետ:

Պետական կենսաթոշակային ապահովության հիմնախնդիրն այն է, որ այն բաշխման համակարգ է, որում ոչինչ չի կուտակվում և չի ներդրվում ապագայի համար: Կենսաթոշակ սահմանելիս հաշվի է առնվում միայն այն հանգամանքը, թե տվյալ անձը որքան ժամանակ է աշխատել: Բազային կենսաթոշակը սահմանվում է պետության կողմից և նույնն է բոլորի համար, որին գումարվում են աշխատանքային ստաժի տարիները և բազմապատկվում համապատասխան գործակցով: Այս համակարգը սակայն հաշվի չի առնում, թե որքան վճարումներ է կատարել անձն իր աշխատելու տարիներին: Ներկա համակարգի հաջորդ բացասական գործոնը կապված է սոցիալական արդարության սկզբունքի հետ, որը խախտվում է, երբ ավելի բարձր սոցիալական վճար կատարած անձինք ստանում են հարաբերականորեն ավելի քիչ թոշակ: Բարձր աշխատավարձ ստացողների, հետևաբար և բարձր վճարումներ կատարողների կենսաթոշակները չեն տարբերվում ավելի ցածր վճարումներ կատարածների

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2005թ., էջ 215-222:

թռչակներից: Այսինքն՝ բարձր աշխատավարձ ստացածների թռչակը կտրուկ նվազում է: Եվ, վերջապես, ներկա համակարգը չի խթանում վարձու աշխատողների՝ և գործատուների՝ սոցիալական վճարները պարտաճանաչորեն կատարելը:

Ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ կենսաթոշակների վճարման աղբյուր են պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, որոնք կենտրոնացվում են ինքնուրույն արտաբյուջետային հիմնադրամում, և որի 85%-ը ծախսվում է կենսաթոշակային ապահովության, մնացածը՝ այլ ապահովագրական դեպքերի հետ կապված վճարումների համար¹: Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի միջոցները ծախսվում են հետևյալ նպատակներով՝

- ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակների և թաղման նպաստների վճարում (կենսաթոշակները վճարվում են ՀՀ պետական բյուջեի՝ այդ նպատակով առանձնացված միջոցներից),
- բ) պետական սոցիալական ապահովագրության առանձին ծրագրերի ֆինանսավորում,
- գ) բնակչության զբաղվածության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական ծրագրերի իրականացում,
- դ) հիմնադրամի ընթացիկ գործունեության, դրա աշխատակազմի և համակարգի մարմինների պահպանման և զարգացման ծախսերի ապահովում,
- ե) հիմնադրամի նյութատեխնիկական բազայի ստեղծում և զարգացում,
- զ) հիմնադրամի գործունեության մասին տեղեկատվության ապահովում և այլ միջոցառումների իրականացում: Հանրապետությունում գործող կենսաթոշակային համակարգը սպասարկում է 30%-ով ավելի կենսաթոշակառուի, քան 10 տարի առաջ²:

Աղյուսակ 2

ՍԱՊՀ-ի տարեկան ծախսերի կառուցվածքը 01.01.2007թ.³

Կենսաթոշակային ծրագիր	Միջին տարեկան ծախսեր (մլրդ դրամ)
Տարիքային	49.6
Արտոնյալ	1.5
Մասնակի արտոնյալ	0.4
Երկարամյա ծառայության	1.5
Աշխատանքային հաշմանդամության	10.6
Ապահովագրական կերակրողին կորցնելու դեպքում	1.5
Ընդամենը	65.1
Ծերության սոցիալական	0.3
Սոցիալական հաշմանդամության	2.8
Սոցիալական կերակրողին կորցնելու դեպքում	0.8
Ընդամենը	3.9
Ընդհանուր գումարը	69.0

Յուրաքանչյուր պետության բարեկեցության ցուցանիշներից մեկը ՀՆԱ-ի այն մասն է, որը հատկացվում է կենսաթոշակային ապահովությանը: Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ում կենսաթոշակային ապահովությանը տրամադրվող միջոցների տեսակարար կշիռը

¹ Հովհաննիսյան Գ., Աշխատավարձի կազմակերպման համակարգը և կենսաթոշակային ապահովությունը ՀՀ-ում: Պետական կադրային քաղաքականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Պետական ծառայություն», 2002թ.:

² Մարդկային զարգացման հիմունքներ (ուսումնական ձեռնարկ մագիստրանտների համար), Երևան, 2004թ., էջ 190:

³ Աղբյուրը՝ ՍԱՊՀ, <http://www.sif.am/Am/index.asp>.

կազմում է մոտ 3%, որը բավականին ցածր ցուցանիշ է, և նույնիսկ զարգացող շատ երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 7-10%-ի սահմաններում:

Միջին տարիքային ապահովագրական կենսաթոշակը, որը տրվում է առնվազն 5 տարվա ապահովագրական ստաժ ունեցող անձանց, կազմում է պարենային աղքատության գծի միայն 82.3-ը և աղքատության 53.8 %-ը: 2007թ. հուլիսի 1-ի դրությամբ ընդհանուր միջին կենսաթոշակը կազմել է 12716 դրամ, ապահովագրական միջին կենսաթոշակը՝ 13336 դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ընդհանուր միջին կենսաթոշակի աճը կազմել է 1730 դրամ, իսկ ապահովագրական կենսաթոշակի աճը՝ 1965 դրամ:

Կենսաթոշակների մակարդակը ցածր է ամենից առաջ այն պատճառով, որ քիչ են կենսաթոշակային համակարգի եկամուտները: Դրանց լրացման հիմնական աղբյուրը աշխատավարձի ֆոնդից կատարվող հատկացումներն են, և այն ավելացնելու համար անհրաժեշտ խթաններից են բնակչության եկամուտների բարձրացումը և դրանց՝ ստվերից դուրս բերումը¹: Ավելի բարձր կենսաթոշակ ապահովելու մեթոդներից մեկը կարող է լինել, անշուշտ, պարտադիր սոցիալական վճարների դրույքաչափի կամ վճարումների կատարման մակարդակի բարձրացումը:

Աղյուսակ 3

Կենսաթոշակային ծրագրերն՝ ըստ կենսաթոշակի իրավունք ունեցող շահառուների տարիքային խմբերում բնակչության տեսակարար կշռի, 2007թ. հաշվարկներ²

	Կենսաթոշակի իրավունք ունեցող տարիքային խումբ	Կենսաթոշակի իրավունք ունեցող տարիքային խմբում շահառու բնակչության տեսակարար կշիռ		
		Տղամարդ	Կին	Ընդհանուր
Տարիքային ապահովագրական	63 և ավելի	82.6%	95.6%	90.4%
Տարիքային աշխատանքային հաշմանդամության	15 և ավելի (մոտավոր)	3.8%	3.1%	3.4%
Ապահովագրական կերակրողին կորցնելու դեպքում	63 և ավելի	3.7%	4.0%	3.9%
Արտոնյալ, մասնակի, երկարամյա ծառայության	50 (մոտ) - 62	2.4%	10.0%	6.5%
Ծերության սոցիալական	65 և ավելի	0.3%	2.5%	1.6%
Սոցիալական կերակրողին կորցնելու դեպքում	15 և ավելի (մոտավոր)	0.3%	0.3%	0.6%
Սոցիալական հաշմանդամության	15 և ավելի (մոտավոր)	2.0%	0.9%	1.4%

Անհրաժեշտ է հստակ տարանջատել սոցիալական (կենսաթոշակային) ապահովագրությունն ու ապահովությունը և բարձրացնել ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և համակարգից դուրս բերել սոցիալական և արտոնյալ կենսաթոշակների վճարումը:

Պետության կողմից տրվող սոցիալական կենսաթոշակներն ըստ էության սոցիալական նպաստներ են, քանի որ դրանք սահմանված են տարիքի հասած, հաշմանդամ դարձած, կերակրողին կորցրած այն քաղաքացիներին, ովքեր ունեն մինչև 5 տարվա աշխատանքային ստաժ, հետևաբար համակարգին պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ չեն կատարել, այնուամենայնիվ, դրանք ֆինանսավորվում են պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեր միջոցներից:

¹ Հովհաննիսյան Գ., Կենսաթոշակային բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Երևան, 2006, էջ 52:

² Տեղեկանք կենսաթոշակների տեսակների վերաբերյալ՝ կենսաթոշակառուների վերաբերյալ վարչական և վիճակագրական տվյալներ 01.01.2006-01.01.2007թթ. ՀՀ կառավարության №350 որոշման №2 կից փաստաթուղթ:

Ընտանեկան նպաստի ծրագրում ներառված կենսաթոշակատուների թիվն ըստ սոցիալական խմբերի, 2007թ. հուլիս¹

	Բնակչություն	Ընտանեկան նպաստ ստացող
I կարգի հաշմանդամության թոշակատուներ	4.821	4.680
II կարգի հաշմանդամության թոշակատուներ	21.297	19.561
III կարգի հաշմանդամության թոշակատուներ	5.556	5.324
Միայնակ տարիքային թոշակատուներ	14.090	13.099
Տարեց տարիքային թոշակատուներ (75-ից բարձր տարիքի)	18.351	12.045

Հանրապետությունում սոցիալական կենսաթոշակ են ստանում կենսաթոշակատուների թվաքանակի մոտ 9%-ը, այսինքն՝ նրանք, ովքեր համակարգի ֆինանսական միջոցների գոյացման գործում անհրաժեշտ մասնակցություն չունեն²:

Ժամկետից շուտ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը արդարացված չէ, քանի որ ապահովագրական մեխանիզմի բացակայությունն այս ոլորտում առաջ է բերում այդպիսի կենսաթոշակ ստացողների թվաքանակի աճ, որը ոչնչով սահմանափակված չէ: Արդյունքում՝ ժամկետից շուտ կենսաթոշակի իրավունք է տրվում անկախ աշխատանքի պայմանների փաստացի իրավիճակից և աշխատողի աշխատունակության կորստից: Ուստի անհրաժեշտ է առաջարկել արտոնյալ կենսաթոշակների վերափոխման ուղիներ, որոնք են.

- արտոնությունների վերացում սահմանվածից քիչ ստաժ ունեցողների համար,
- արտոնյալ կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրի փոփոխում,
- արտոնյալ կենսաթոշակների անհատական նշանակում՝ աշխատատեղերի ատեստավորում կատարելու միջոցով,
- արտոնյալ կենսաթոշակ ստացողների համար պարտադիր սոցիալական ապահովագրության լրացուցիչ վճարների սահմանում:

Արտոնյալ պայմաններով և երկարամյա ծառայության կենսաթոշակային ապահովության համակարգերի բարեփոխման համար կարևոր խնդիրներից է արտոնյալ կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման աղբյուրների հստակեցումը: Այսինքն՝ այդ կատեգորիաների աշխատող անձանց պետք է ժամկետից շուտ կենսաթոշակ վճարել ոչ թե մնացած աշխատողների, այլ տվյալ պայմաններում (առանձնապես ծանր, առանձնապես վնասակար) աշխատուժ օգտագործող և, հետևաբար, այդ աշխատանքի միջոցով շահույթ ստացող գործատուի հաշվին: Արտոնյալ կենսաթոշակային համակարգին զուգահեռաբար անհրաժեշտ է ներդնել և զարգացնել կորպորատիվ, մասնագիտական և ոչ պետական կենսաթոշակային համակարգեր: Կորպորատիվ կամ մասնագիտական կենսաթոշակային համակարգերից տրվող կենսաթոշակները պետք է ոչ թե փոխարինեն, այլ լրացնեն պետականին, քանի որ այդ համակարգերը պետք է հենվեն այն սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ գործատուների և աշխատողների մասնակցությունը, կենսաթոշակի չափերի կախվածությունը ապահովագրական վճարների մուծման ժամանակահատվածի տևողությունից և դրանց ծավալից: Ոչ պետական կենսաթոշակային ապահովագրության համակարգի ձևավորումը պետք է հենվի ֆինանսական հուսալիության բարձրացման վրա և չի խոչընդոտի պետական կենսաթոշակային ապահովագրության բարե-

¹ Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը 2007թ. հունիս-հուլիս ամիսներին, ԱՎԾ:

² 2003թ. «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սոցիալական կենսաթոշակատուների ֆինանսավորումն այսուհետ իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

փոխմանը: Ոչ պետական կենսաթոշակային ապահովագրության համակարգը կարող է ֆինանսավորվել ինչպես ապահովագրվածների, այնպես էլ գործատուների կամավոր վճարումների հաշվին՝ կոլեկտիվ և անհատական աշխատանքային պայմանագրի շրջանակներում: Ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների կողմից յուրաքանչյուր քաղաքացուն տրվող հնարավորությունները պայմանավորված են մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը դրամական միջոցների կուտակման պարտադիր և կամավոր համակարգով: Ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամները աշխատում են կուտակման սկզբունքով, որը ենթադրում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում կենսաթոշակային մուծումների կանոնավոր փոխանցում հիմնադրամ: Հավաքված միջոցները եկամուտի ապահովման նպատակով ներդրվում են տարբեր ակտիվների մեջ, և տվյալ գործառնությունները սահմանվում են որպես կենսաթոշակային ռեզերվների տեղաբաշխում:

Տարիքային ապահովագրական կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց թվի կրճատումը և բազային կենսաթոշակի համեմատությամբ սոցիալական կենսաթոշակի 20%-ի կրճատումը կվերածվեն ծախսերի մասով համակարգի խնայողությունների¹:

Չնայած հիմնական կենսաթոշակը և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքն ինդեքսավորվում են այնպես, որ աճեն ավելի արագ, քան աշխատավարձերը, ապահովագրական ստաժի միջին տարիների սրընթաց անկումը նշանակում է, որ միջին կենսաթոշակի և միջին աշխատավարձի հարաբերակցությունը նվազել է 2007թ. կանխատեսված 14.9 %-ից մինչև 12.9%:

Այսպիսով, սոցիալական ապահովության համակարգի բարեփոխումը պահանջում է սոցիալական համերաշխություն, որը կարող է ամրագրվել երկարաժամկետ հասարակական պայմանագրերով: Անհրաժեշտ է նաև ձևավորել կենսաթոշակային ապահովագրության բարեփոխումների ամբողջություն՝ նոր կենսաթոշակային համակարգի հայեցակարգի մշակում և օրենսդրական հիմքերի մի շարք փոփոխություններ.

- Կենսաթոշակային բարեփոխման համակարգում կենսաթոշակների ֆինանսավորման կուտակային բաղադրիչի ներդրումը՝ իրավական նորմերի, հիմնական մեթոդական և կազմակերպական միջոցառումների մշակման միջոցով:
- Տնտեսական, օրենսդրական և կազմակերպական պայմանների ապահովումը՝ կամավոր կենսաթոշակային իրավունքների կուտակման համար, ինչը հնարավորություն կտա էականորեն բարձրացնել կենսաթոշակների չափը:
- Կենսաթոշակային ապահովագրության կամավոր ձևերի զարգացման նպատակով տնտեսական խթանների ստեղծումը:
- Կուտակային համակարգում կենսաթոշակային ռեզերվների ձևավորումը՝ բնակչության տարբեր կատեգորիաների սոցիալական պաշտպանության հարցերի կարգավորման համար:
- Արտոնյալ (վաղաժամկետ) կենսաթոշակային համակարգում կենսաթոշակային արտոնություններ ստացողների թվաքանակի կրճատումը՝ կենսաթոշակային համակարգում առաջնություն տալով մուծումներ/վճարումներ համարժեքության սկզբունքին:
- Ավելի ուշ կենսաթոշակի անցնելու խթանների ստեղծումը այնպիսի կենսաթոշակային բանաձևի կիրառմամբ, համաձայն որի կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝ ելնելով ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում կուտակված ապահովագրական մուծումների ծավալից և կենսաթոշակի անցնելու դեպքում կյանքի սպասվելիք միջին տևողության վիճակագրական տվյալներից:

¹ Կենսաթոշակային համակարգի բարեփոխումները Հայաստանում. դեպի գրո և առաջին հենասյուններ: Ներկա իրավիճակը, միտումները և միջազգային փորձը, 30.11.2007թ.:

- Աշխատողների և գործատուների կողմից վճարվող ապահովագրական մուծումների բաժնեմասի օպտիմալացումը, որի առավել ընդունելի համամասնությունը համարվում է աշխատողների և գործատուների հավասար ներդրումը:
- Գնահատումների և միջազգային փորձի հիմնադրումների իրականացումը արդյունավետ կենսաթոշակային մոդելի և բանաձևի ընտրության համար, դրանց համապատասխանեցումը տվյալ ոլորտում միջազգային կազմակերպությունների հանձնարարականներին:
- ՀՆԱ-ի նպատակադրված բաշխումը և հիմնավորումը միջին և երկարաժամկետ հեռանկարում՝ հաշվի առնելով աշխատավարձի հետ կապի և կենսաթոշակի անցնելու տարիքը:
- Բաղաքացիների կենսաթոշակային ապահովության իրական մակարդակի աստիճանական բարձրացումը կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության ապահովման ճանապարհով:

Կենսաթոշակային համակարգի ընդհանուր ֆինանսական հաշվեկշռվածությունը պետք է պահպանել այնպիսի մակարդակի վրա, որը հնարավորություն կտա իրականացնել վճարումները պարտադիր կուտակային կենսաթոշակառուների ֆինանսավորման համար:

Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման հետ մեկտեղ պետք է լուծվի նաև պետության սոցիալական քաղաքականության արդիականացման հիմնահարցը. անհրաժեշտ է ապահովել ֆինանսական ռեսուրսների հաշվեկշռված աճ, իրականացնել կայունացում և ապահովել կենսաթոշակառուների նյութական դրության զգալի վերելք, ապահովել բավարար պայմաններ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի բարձրացման համար, կտրուկ կրճատել կարիքավոր քաղաքացիների թվաքանակը:

АЛВАРД ЗАТИКЯН

*Научный секретарь Института
экономики им. Котаняна НАН РА, к.э.н*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ГЕНДЕРНЫХ ИССЛЕДОВАНИЙ В СФЕРЕ ЭКОНОМИКИ АРМЕНИИ

Переходный период с его трудноразрешимыми социально-экономическими и политическими проблемами особенно больно отразился на женщинах. Негативные последствия резкой смены общественной формации, массового закрытия предприятий и внезапно обрушившейся безработицы, нищеты и маргинализации, которые обрели стойко женское лицо, а также нарастающая год от года миграция, каснувшаяся наиболее активного трудового мужского населения, поставили женщину в новые социально-экономические условия.

Женщины в суровых условиях выживания проявили гибкость экономического честолюбия. Если мужчины пренебрегли многими работами только потому, что считали их ниже своего достоинства или занимаемого ими ранее статуса, то женщины были озабочены тем, как прокормить семью. Не пренебрегая никакой работой, женщины начали осваивать новые профессии, приспособляясь к новым условиям.

Женщины за эти годы проявили себя как более гибкие и предприимчивые: способные к быстрой адаптации в новых экономических условиях.

Однако бремя семейных обязанностей мешает им уделять основное внимание профессиональному росту. В связи с этим перед государством стоит важная задача создания гибкой и благоприятной среды, в которой женщины могли бы полноценно участвовать в экономической